

# ՀՆՉԱԿ

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Յայտարարում ենք, որ Հնչակեան Յեղափոխական կուսակցութիւնը պաշտօնապէս միացել է հոշակաւոր Արևելեան Դաշնակցութեան հետ ( Անաթօլիքի՛ Օմոսպօնդիա, — Confédération Orientale ), որ կազմված է մահեդօնական, ալբանական ու կրետական յոյն յեղափոխական մասնախմբերից և որի նախագահն է նշանաւոր յեղափոխական յոյն զորավար ( général ) Դիմիտրի Ն. Բօցարիս: Արևելեան Դաշնակցութեան նպատակն է՝ աջակցել բռնապետական լծի տակ հեծող արևելքի բոլոր ժողովրդների ազատման գործին: Նա, դաշնակցելով Հնչակեան Յ. կուսակցութեան հետ, կաջակցէ նաև հայ յեղափոխական գործին:

## ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐ.

Քաղաքական կերպերը  
և  
յեղափոխական աշխատութիւնը.  
( Յօդուած երրորդ . )

« Հնչակի » վերջին համարի առաջնորդողում մենք ասացինք, թէ իր մէջ տեղի ունենալով տնտեսական ձեւերի ներքին կերպարանափոխութիւն դէպի խոշոր արդիւնաբերութիւնը, հայ ժողովուրդը բնական պահանջ ունի վերացնելու այն բոլոր քաղաքական պայմանները, որոնք այժմ իրանց գոյութեամբ արգելք են հանդիսանում այդ կերպարանափոխութեան պրօցէսին և տնտեսական զարգացման: Դա մի կողմից: Միւս կողմից ծագում է պահանջ այնպիսի սոր քաղաքական պայմանների հաստատութեան, որոնք արդիւնաբերութեան այդ նոր, մուտք գործող կերպերին միջոց տան ազատաբար աճելու և զարգանալու: Այստեղից մենք կարող ենք հետևանքել այն, թէ երբ մի երկրում մուտք են գործում արդիւնաբերութեան նախկիններից բոլորովին տարբեր՝ կերպեր, այդ երկրի քաղաքական պայ

մաններն էլ պէտք է փոխվին և վերակազմվեն արդիւնաբերութեան այդ նոր, այդ մուտք գործող կերպերի համապատասխան քաղաքական պայմանների վրայ, որոնք էլ իրանց կողմից նոյնպէս բուրրովին տարբեր են նախկիններից: Այսպէս, արդիւնաբերութեան ձեւերի կերպարանափոխութեանը անխուսափելի, ճակատագրական կերպով պէտք է յաջորդէ քաղաքական, հասարակական ու իրաւական կացութեան ընդհանուր կերպարանափոխութիւն: Այժմ մի հարց է ծագում: Որո՞նք են այն քաղաքական կերպերը, պայմանները, որ, վերացնելով արգելքները, կը նպաստեն հայ ժողովրդի տնտեսական առաջադիմութեան, այսինքն՝ խոշոր արդիւնաբերութեան զարգացման և զրանով նրա ամբողջ կուլտուրական առաջադիմութեան: Անցեալ անգամ մենք տեսանք, որ աաճկահայ ժողովրդի վերաբերութեամբ այդ քաղաքական գլխաւոր պայմաններից մէկը նախ և առաջ տաճկահայի քաղաքական զատումն է թիրքիայից, նրա ազգային անկախութիւնն է, Տաճկահայ ազգային անկախութիւնն այժմ դարձել է մէկ իրապէս անհրաժեշտ հարկաւորութիւն, կենսական մի ներքին պահանջ: Հետեւաբար, այդ կէտը յայտնվում է հայ յեղափոխականների հանդէպ դրված քաղաքական առաջնակարգ խնդիրներից մէկը տաճկահայերի նկատմամբ: Բայց դա առաջնակարգ խնդիրներից մէկըն է և ո՛չ միակը: Ամբողջ հայութեան տնտեսական զարգացման և ընդհանուր կուլտուրական առաջադիմութեան համար անհրաժեշտ է վերացումն միապետական, ինքնիշխանական քաղաքական պայմանների և հաստատութիւն այնպիսի քաղաքական կերպերի, որոնք ժողովրդին տան մարդկային ու քաղաքացու իրաւունքներ, ուրիշ խօսքով՝ քաղաքական ազատութիւն: Ազատութիւն մամուլի, խօսքի, կրթութեան, խղճի. ազատութիւն գումարման, ընկերութիւններ հիմնելու. ազատութիւն պարապմունքի, տեղափոխութեան ու երթևեկութեան. անձի ու բնակարանի անբռնաբարութիւն. քուէարկութեան և ընտրողական ազատութիւն. զէնք կրելու ազատութիւն և այլն — ահա գլխաւոր սկզբունքներն այն իրաւունքների, որոնք կոչվում են մարդկա-

յին ու քաղաքացու իրաւունքները: Արանց գոյութեամբ կառավարչական կերպն էլ պէտք է լինի ներկայացուցչական, այսինքն ժողովրդային բուկարկութեամբ ընտրված պատգամաւորները կազմում են օրէնսդիր ժողովը որ լիազօր իրաւունք ունի կառավարչական բոլոր գործերում: Այդ իրաւունքների, այլ խօսքով՝ քաղաքական ազատութեան՝ ձեռք բերելը միանգամայն անհրաժեշտ է ամբողջ հայութեան տնտեսական դարգացման և առհասարակ կուլտուրական ընդհանուր առաջադիմութեան համար:

Բայց այստեղ աշխատանքի ժողովրդի առջադիմութեան ու շահերի տեսակէտից ծագում է մի խնդիր, որ իր կարեւորութեամբ առաջնակարգ է: Տեսնենք թէ ինչումն է կայանում այդ խնդիրը:

Մենք գիտենք, որ խոշոր արդիւնազօրութեան անձան ու զարգացման պահանջն առաջացնում է մտրդկային ու քաղաքացու իրաւունքների, քաղաքական ազատութեան հաստատութեան պահանջը: Բայց խոշոր արդիւնազօրութեան այժմեան՝ կապիտալական կերպերը կը զարգացնեն հայերիս մէջ այն՝ լակ օրախարձով ապրող և բացի իր երկու ձեռքից ուրիշ սխիշ ստեղծելու չունենող՝ ժողովրդային ընդհանրութիւն կողմող աղքատ ու աշխատանքի գտնակարգը, որ կոչվում է պրօլետարիատ: Եւ այսպէս տեսնում ենք, որ մի կողմից խոշոր արդիւնաբերութեան զարգացումը պայմանաւորում է հայութեան քաղաքական ազատութեան իրականացումը ու տնտեսական զարգացումը և ուրեմն նպաստում նրա ընդհանուր առաջադիմութեանը, բայց միւս կողմից շարունակ անոյ աղքատին հարստութիւնը նա կը զգէ մէկ առանձնաշնորհված գասակարգի ձեռք և ահագին քանակութեամբ կը բազմացնէ աղքատ, վարձվոր աշխատանքների, պրօլետարիի թիւը: Գա է խոշոր արդիւնաբերութեան զարգացման բնական ընթացքը: այսպէս է նա կատարվել ու կատարվում քաղաքակրթված ազգերի մէջ. դա էլ կը լինի նըրա ընթացքը և հայոց մէջ, ուր կապիտալական խոշոր արդիւնաբերութեան կերպերն արդէն գրեւ են «իրանց բոյնը»: Ահա հէնց այդ կէտը հայ հշմարիտ առաջադէմ յեղափոխականներին սրտատուրացնում է իրանց յեղափոխական ներկայ աշխատութիւնը նախագծել ու որոշել հայկական տնտեսական իրականութեան համապատասխան կերպով: Միանգամ սկսել են գոյութիւն ունենալ կապիտալական արդիւնաբերութեան կերպեր, որոնք ճակատագրական կերպով պէտք է ստեղծեն հայ պրօլետարիատ գասակարգ, որը այսօր դեռ սաղմի մէջ բայց՝ գնալով շարունակ պիտի աճէ ու մեծանայ՝ շնորհով նոյն արդիւնաբերութեան կերպերի անընդհատ

զարգացման, — հէնց դրա հիման վրայ մեր, սօցիալիստներին, այսօրվան քաղաքական պահանջները պէտք է համապատասխան լինեն այդ ծագող գասակարգի, աշխատանքի ընդհանրութեան շահերին: Մենք պէտք է ձգտենք ձեռք բերել այնպիսի քաղաքական կերպեր, որ տան միջոցներ անմիջապէս նախաձեռնելու աշխատանքի գտնակարգի շահերի համաձայն հասարակական աշխատութեան: Այդ պատճառով մեր այսօրվան յեղափոխական աշխատութիւնն էլ պէտք է ունենայ այնպիսի ընթացք ու եղանակներ, որ կարող լինենք ձեռք բերել մեր սպառնալի աշխատութիւնը դիւրացնող քաղաքական կերպեր: Այդ կէտից ուղղակի առաջանում է այսպիսի եզրակացութիւն: — պէտք է պարզել ու որոշել թէ ինչ քաղաքական կերպեր են հարկաւոր, որ մշ միայն նը պատեն հայութեան տնտեսական ու կուլտուրական զարգացման ընդհանրապէս, այլ և ստեղծեն նպաստանքի պայմաններ հայ աշխատանքի ընդհանրութեան շահերի ու ձգտումների աղատ արտայայտութեան և նըրանց համապատասխան աշխատութեան համար:

Մեր սոցիալիստներն առաջին մասում մենք տեսնուք, որ հայութեան տնտեսական զարգացման համար անհրաժեշտ է ձեռք բերել քաղաքական ազատութիւն: Բայց այդ ասելով դեռ ամեն բան չէ պարզվում: Երբ նով միայն հասկացվում է յայտնի քաղաքական սկիզբունքների գոյութեան հարկաւորութիւնը, մինչդեռ այդ սկիզբունքների գործնական արտայայտութիւնը կարող է լինել սահմանափակ, որպէս կարող է լինել նաև ընդարձակ, այսինքն սահմանազրակայ կարգերը կարող են լինել աստեղ կամ պակաս աղատ, կարող են տալ ժողովրդին մարդկային ու քաղաքացու իրաւունքներ սահմանափակ և կամ ընդարձակ ծաւալով: Աշխատանքի ընդհանրութեան շահերի տեսակէտից մենք պէտք է ձգտենք ձեռք բերել քաղաքական ընդարձակ ազատութիւն, ընդարձակ ու միավարական սահմանազրութիւն, ու միավարական քաղաքական կերպեր: Ձեռք բերելով այդպիսի քաղաքական պայմաններ, մի կողմից կը ստեղծվեն միջոցներ տնտեսական աղատ զարգացման համար և առաջադիմութեան շարժի վրայ կանցնէ առհասարակ հայութեան կուլտուրական կեանքը: միւս կողմից աշխատանքի ընդհանրութիւնը կը զարգանայ քաղաքականապէս, ընդհանուր և ուղղակի բուկարկութեան իրաւունքի միջոցով կարող կը լինի միջամտել քաղաքական գործերում, միջոցներ կունենայ մաքառելու կապիտալի ձեռնմանքի դէմ, համախմբվելու, միանալու ու կազմակերպվելու իրրև մէկ առանձին գասակարգ՝ իր առանձին շահերով, որպէս զի սոցիալիստով պատրաստէ իր մարդկային ու

տնտեսական բարորութեան ճշմարիտ, վերջնական և զատման յայթանակելու Բացի այդ, սամկավարական քաղաքական կերպերը միջոց կըտան աշխատատեղերին հովանաւորող օրէնքներ՝ բանտարական օրէնագրութիւն հաստատելու, զգալի կերպով մեղմացնելու այն չարիքները, որ ճակատագրական կերպով պատճառում է կապիտալական արդիւնաբերութիւնը և կարճացնելու կապիլի տիրապետութեան չըջանի տնտեսութիւնը:

Մեր մինչև հիմա առածներէից յետոյ զալիս ենք այն եղբայրացիներն, թէ հայ յեղափոխութեան անմիջական, մտակայ նպատակն է՝ վերացումն միապետական, ինքնիշխանական բոլոր կարգերի և ձեռք բերել սամկավարական քաղաքական ազատութիւն: Մեր մինչև հիմա առածներէից յետոյ նոյնպէս օրոշվում է, թէ յեղափոխական որսիտի աշխատութիւն է պէտք: Մեր աշխատութիւնը պէտք է կենտրոնացնենք հայ աշխատաւոր ընդհանրութեան վրայ, ինչպէս տարածելով նրա մէջ յեղափոխութեան իմաստի ու նպատակների գաղափարներն ու սկզբունքները, նոյնպէս պատրաստելով նրա մէջ ընդհանուր արատամբութեան ոյժը, կազմակերպութիւնը: Այժմ հայ աշխատաւոր ընդհանրութիւնը կազմուած է երկու զլխաւոր մասից. մէկը՝ փոքրաթիւ՝ քաղաքային բանտները, միւսը՝ ստուար մեծամասնութիւնը՝ գիւղացիները: Մենք ունենք խոշոր արդիւնաբերութեան կենտրոն կազմող վայրեր, ուր բանտների չըջաններում պէտք է տարածել ու բացատրել նրանց քաղաքական ու տնտեսական շահերի սկզբունքներն ու գաղափարները, լուսարանել սօցիալիստական ձգտումների նշանակութիւնը նրանց շահերի վերաբերութեամբ և կազմակերպել նրանցից բանտարական խմբեր՝ ընդունալ յեղափոխութեան ժամանակ պաշտպան լինելու իրանց քաղաքական սամկավարական պահանջների և այդպիսով յօգուտ աշխատաւոր ընդհանրութեան ճնշում ու աղղկելութիւն գործելու յեղափոխական անցքերի ընթացքի վրայ: Բնակելով քաղաքներում ու գրանով կուլտուրապէս աւելի հասունացած, քան գիւղացիները և մի և նոյն ժամանակ սօցիալիստական ձգտումներն ուղղակի արդիւնք լինելով բանտարական շահերի, հայ բանտները յայտնվում են յեղափոխութեան ոյժերի զըլխաւոր տարրը: Յետոյ՝ կայ գիւղացի ժողովուրդը: Եթէ սա իր տնտեսական տարրեր պայմանների շնորհով ընդունակ չէ խրացնելու սօցիալիզմի գաղափարները, սակայն իր հասարակական գրութիւնը, իր ձգտումներն ու շահերը միանգամայն մեծ դիրութիւն են տալիս նրան ըմբռնելու սամկավարական կերպերի պահանջը: Եւս աւելի՛ Նրա առաւել ընդունակ մասը կը յայտնվէ ջերմ ջատագով այդ կերպերի հէնց այն պատճառով,

որ զրանք տալիս են միջոցներ արմատականապէս բարեկարգելու գիւղական ժողովրդի հարկային սխալման և հողային յարաբերութիւնները և օժտում են նրան քաղաքական ընդարձակ իրաւունքներով: Սամկավարական քաղաքական կերպերն բմբռնելով, գիւղական ժողովուրդը յեղափոխութեան միջոցին՝ իր բազմաթիւ լինելու շնորհով յայտնի հանգամանքներում կարող է մինչև անգամ վճռական դեր կատարել յօգուտ այդ կերպերի հաստատութեան: Հետևաբար, յեղափոխութեան նպատակայարմար ելքի աջողութիւններն գիւղացիներ համար, միանգամայն անհրաժեշտ է՝ գիւղական ժողովրդի մէջ ապստամբական ոյժեր կազմակերպելով հանդերձ ընդարձակ պրօպագանդա անել սամկավարական սկզբունքների ու գաղափարների:

Ահա՛ այն կազմակերպական, պրօպագանդական ու ազխատայական յեղափոխական աշխատութիւնը, որ պէտք է կենտրոնանայ աշխատաւոր ընդհանրութեան վրայ: Այդ աշխատութիւնն ընկնում է յեղափոխական երկ տասարգութեան վրայ: Բայց որպէս զի նա կարողանայ կատարել այդ, նախ և առաջ պէտք է միանգամայն հրօժարվէ նախապաշարումներից և հասկանայ, որ հայկական յեղափոխութեան իմաստը չէ կայանում՝ ազգային վիրաւորված անձնասիրութիւնից առաջացած կոյր վերջինից ընդհանրութեան և կամ ազգային «նախկին փոքրի վերածնութեան» մէջ: Այդպիսի ձգտումներ կարող են ունենալ նեղասիրտ ու նեղամիտ անհատներ, ս'ըբան կողմէ՛ք՝ բազմաթիւ անհատներ, թէկուզ նայն իսկ ժողովրդի մէջ, որ անմիջական կերպով գիտէ իր կենսական ցուները, և ոչ միայն մեր՝ այսպէս կոչված՝ յեղափոխականների շարքերում: Սրանք գեւ շեն հասկացել, թէ յեղափոխութեան անհրաժեշտութիւնը հայ ժողովրդի կենսական ներքին, օրգանական պահանջ է: Հրամարվելով նախապաշարումներից, յեղափոխական երիտասարգութիւնը պէտք է որոշէ ու պարզէ իրան յեղափոխութեան տեսական ու գործնական ծրագիրը, նրա պատմական, հասարակական նշանակութիւնը, նրա էական պատճառները և թէ՛օրիս պէս հաւանական ընթացքը: Իսկ այդ բոլորը որոշելու և նպատակայարմար աշխատութեան ձեւնարկելու համար՝ յեղափոխական երիտասարգութեանը անհրաժեշտ է իւրացնել առհասարակ մտրդկային կեանքի հասարակական տնտեսական երևոյթների ճշմարիտ գիտական հասկացողութիւնը, մշակել իր մէջ կրիտիկական, քննող հայեացք՝ այդ երևոյթների վրայ, ընդարձակելով իր մտաւոր հորիզոնը: Իսկ զրա համար նրան հարկաւոր է ըմբռնել կարլ Մարքսի շիտայի (գալրոցի) այն մատերիտալիստ փիլիսոփայական վարդապետութիւնը՝ գիտական սօցիալիզմը, որ գիտութեան վերջին խօսքն է, որ մատն

րիալիստ - գիտական մեկնարանութիւն է տալիս մարդկային կեանքի էվոլյուցիային (յեղաշրջման) և միանգամայն որոշում նրա առաջադիմութեան ուղին ու նրա ապագայ հանրակացութեան կերպերը: Թող չանեն մեզ այն տարօրինակ ու պարզամիտ աուարկութիւնը, թէ սօցիալիզմը վերագրելի է, յատուկ է միայն Եւրօպային: Սօցիալիզմի գիտական հետազոտութիւնների ազդերն ու հիմքը եղել է եւրօպական ազգերի տնտեսական կեանքը, բայց դրանից չէ կարելի հետեցնել, թէ սօցիալիզմը եւրօպական ազգութիւնների մենաշնորհ է: Սօցիալիզմը գիտութիւն է, նա փիլիսոփայական մէկ ամբողջ աշխարհահայեացք է և իրրեւ այդպիսի՝ նա կտակված է ամեն մէկ անհատի, ամեն մէկ ազգի, ամբողջ մարդկութեան: Եւ նա ո՛չ միայն պարզապէս փիլիսոփայական, այլ յեղափոխական - փիլիսոփայական աշխարհահայեացք է, որ որոշում ու նախագծում է ազգերի կապի տալիս շրջանից յետոյ զալիք մարդկային հասարակական, տնտեսական ու մասնաւոր ամբողջ հանրակացութեան նոր - սօցիալիստական - շրջանը: Աս, կործանելով ներկայ փամած հանրակացութիւնը, իրերի ընթացքի շնորհով կիրականանայ նոյնպէս ճակատագրական կերպով, որպէս ճակատագրական կերպով այժմեան հանրակացութիւնը կաուուցեց իր հոյակապ չէնքը նոյն իր կործանած աւատական հանրակացութեան աւերակների վրայ: Եւ հայ յեղափոխական երիտասարդութիւնը թող պարզէ իրան ու իւրացնէ այդ յեղափոխական գիտական թէօրիան, այդ ամենաառաջադէմ գաղափարը, աշխարհահայեացքը և այդ զէնքով թափանցէ աշխատաւոր ժողովրդի խաւերը: Միայն այդ ժամանակ նա կը կանգնէ իր գերի բարձրութեան վրայ և կարող կը լինի հպարտութեամբ մտածել մեծ գործի ապագայի մասին: «Առանց յեղափոխական թէօրիայի չը կայ յեղափոխական շարժում՝ բառիս փոփոխումն նշանակութեամբ: Ամեն մի դասակարգ, որ ունի ձգտում ազատվելու, ամեն մի յեղափոխական կուսակցութիւն, որ ձգտում է իր ձեռքը զցել իշխանութիւնը (յօգուտ ժողովրդի, կամ նրա այս կամ այն դասակարգի), - յեղափոխական են մինչև այն աստիճան, ինչ աստիճան նրանք իրանցից ներկայացնում են հասարակական առաւելագոյն առաջադէմ հոսանքները, և հետեւաբար յայտնվում են իրանց ժամանակի ամենաառաջադէմ գաղափարների տէրեր: Այն գաղափարը, իդէան, որ իր ներքին բովանդակութեամբ յեղափոխական է, մի տեսակ զինամիտ է, որ չի փոխարինվիլ աշխարհիս ո՛չ մի պայթուցիկ նիւթով:»

ՄԻ ՄԵԾ ՍԻԱԼ.

«Ամեն մի մահկանացու սխալական է» կըսէ ժողովրդային առածը:

Եւ իրաւ, աստուածները և աստուածներէ առանձնաշնորհաւ վեհափառներն են միայն, որ սխալ չեն ըներ, սխալ չեն գործեր, մի խօսքով՝ չեն սխալիր:

Մենք, հայ յեղափոխականներս, պարզ մահկանացու լինելով կարող ենք և սխալներ գործել:

Ճշմարտութիւն սիրող անձն երբէք խոյս չը տար իր սխալներու վրայ խօսել ու խորհիլէ:

Ամեն մի գործի, ամեն մի ասպարէզի մէջ կարող են սխալներ գտնուիլ: Վա՛յ այն գործին որ սխալներու վրայ կը բալէ՛. առաւել ևս վա՛յ այն գործիչին, որ իր սխալները նկատելով, կանգ չառնէր միջոցներ ձեռք բերելու, որպէս զի այդ սխալները ուղղուին և որպէս զի դոքա այլ ևս չը կրկնուին:

Հայ յեղափոխականները, առաւել ևս նոքա, որք կոչուած են մի մեծ գործ վարելու, այն է՝ ժողովրդային ազատութեան մեծ գործը՝ չը պիտի խոյս տան ժամանակ առ ժամանակ իւր նայելէ, իրենց գործունէութեան մեծ դաշտի վրայ, խորհելու համար հարկաւ, թէ արդեօք ի՛նչպէս և ի՛նչ միջոցներով կարելի կը լինի այս ինչ կամ այն ինչ գործուած սխալի առաջն առնել: Եթէ տեղի չունենայ այս և եթէ մենք մեր սխալները նկատելով չաշխատինք զանոնք ուղղելու, այլ ընդհակառակն նետելով գործուած սխալներն մի կողմ, եթէ շարունակենք մեր ճանապարհը, մեր ընթացքը, հարկաւ կուգայ մի օր, երբ մեր առջև կը հանդիսանան խոչնդոտներ, որոնց յաղթել գրեթէ անկարելի կը լինի շատ անգամ...:

Որչափ դարգացած և յառաջադիմած է մի ազգ, մի ժողովուրդ, նոյնչափ քիչ տեղ է բռնած նորա կենաց մէջ նախապաշարուումը: Ժողովրդոց կեանքի մէջ և մի բացարձակ օրէնք կայ. այն է՝ թէ որչափ ազատ է մի ժողովուրդ, նոյնչափ և քիչ նախապաշարուած է նա: Ուստի քաղաքական կէտն ալ մեծ նշանակութիւն ունի այս տեսակէտով: ստորեկ ժողովուրդները առհասարակ կոյր են, որովհետեւ զանոնք չըջապատող մթնոլորտը լի է նախապաշարումներով: Իսկ այդ կուրութեան պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ նախապաշարումը:

Հայ ժողովուրդի դարեր տեղ քաղաքական ու անտեսական կացութիւնը պատճառ է եղած նորա կուրութեան և չէ ցրուած նորա հնաւանդ նախապաշարումները: Առհասարակ պէտք է ինկատի ունենալ այն կէտը, որ բռնակալ կառավարութիւնները, որոց միակ նպատակն է ծաւալել խաւարն ու մթութիւնը, լոյսի դէմ պատերազմելով, ո՛չ միայն չեն աշխատիր ժողովուրդը նախապաշարումներէ ազատելու, այլ ընդհակառակը ամեն ճիգ կը թափեն, ամեն միջոց ի գործ կը դնեն ըստ կարելոյն ընդարձակելու համար նախապաշարումներու ասպարէզը:

Ինչո՞ւ բռնապետութիւններն առ հասարակ այնչափ հակառակ են կրթութեան: Որովհետեւ նոքա գիտեն որ կըր

Թուփիւնը լոյս, քննող հայեացքներ տարածելով, արմա տախիլ կընէ ժողովրդային նախապաշարութիւնները: Թիւրք բռնապետութեան քաղաքական անիրաւ կացութեան տակ ճնշուած լինելով, հայ ժողովուրդը զեռ չէ սկսած իր նախապաշարութիւններէ ազատուիլ: Սակայն մարդկային ընդհանուր յառաջդիմութիւնը ջախջախելով ամեն ինչ որ կը խանգարէ իր ընթացքը, ջախջախեց նաև թիւրք կազմակերպութեան հայ ժողովրդեան առջև դրած խոչընդոտները. հայը զգաց իր անտանելի կացութիւնը: Արթնցաւ հայ ժողովուրդը, քչեց իրմէ շուրջ սիրող խաւարը, սկը սաւ խորհել ու որոնել այն միակ միջոցը, որով միայն նա կարող կը լինի բարեկարգել իր դրութիւնը. յեղափոխական ոգին ցնցեց նորան. նա զգաց իր մէջ նոր ոյժ, նոր և ուսնդ և մի մեծ փոփոխութիւն: Յեղափոխական ոգին սկը սաւ գործել իր սոցիալիստիկութիւնը, մտաւ գետնափոր խրճիթներու մէջ, մաքրեց նոցա սիրող մթնոլորտը, մերկացրեց ժողովրդեան աչքին իր հինգհարիւրամեայ կրած օտսկալի տառապանքները և ասոնցմէ ծագած անթիւ ու անհուն չարիքներն, և վերջապէս ցոյց տուաւ ժողովրդեան իր մեծ դատի մանրամասնութիւններն պարունակող ծառը, «չարի և բարւոյ ծառը»:

Ահա այն օրէն սուլթանը զայն անիծեց, սակայն ո՛չ միայն գրախտէն զօրս հանել, այլ և ծառէն իսկ հեռացրել չը կարողացաւ: Ժողովուրդը զգաց իր ոյժը, աւելի՛ ոգևորուեցաւ, աւելի՛ սիրտ ու հոգի առաւ, սկսաւ գործել...

Սակայն ժողովրդային մեծ դատի «վարիչները» սըխալ հասկացան այդ գառի իմաստը և սկսան յարձակիլ ո՛չ միայն սուլթանի, այլ և տաճիկ ժողովրդեան, այն է՝ ընդհանուր տաճիկութեան վրայ: Գա էր այն մեծ սխալը, որ ըրին հայ «աղգասէրները» առանց հասկնալու որ իրենց ըրածը որչափ մեծ սխալ է:

Գորա պատճառը հայ «աղգասէրներու» նախապաշարուած ըլլալն է: Անհրեքելի է, որ որչափ բարձր է մարդու նախապաշարման աստիճանը, նոյնչափ ցած է նորա զարգացման աստիճանը, նոյնչափ թոյլ է զայն զէպի յառաջդիմութիւն մշտն ետանդը, նոյնչափ նեղ է նորա հայեցողութեան հորիզոնը: Նախապաշարում մի կողմէն և զարգացում ու յառաջդիմութիւն միւս կողմէն միշտ իրարու զէմ կուր մէջ են: Տակաւին նախապաշարուած լինելով և կամ աւելի ճիշդը եթէ ըսենք՝ տակաւին նախապաշարութիւններէ նոր ազատուիլ սկսած լինելով, հայ աղգասէրներն ի մի ձուլեցին երկու միանգամայն հակառակ հասկացողութիւններն, տարրերն, այն է՝ թուրք ժողովուրդն և թուրք կառավարութիւնն: Իմանալով որ թուրք կառավարութիւնը հակառակ է հայութեան մեծ նպատակին, նոքա կարծեցին թէ թուրք ժողովուրդն ալ հակառակ է:

Հարկա՛ւ, սկիզբէն մի այսպիսի կարծիք ունենալը և կամ մի այսպիսի սխալի տեղի տալը ո՛չ այնչափ պախարակելի ու գատափետելի էր, որչափ այսօր: Եւ մենք ցաւ ի սիրտ պիտի յայանենք որ նոյն իսկ այսօր կը գտնուին մեր մէջ իրենց կոչումէն շատ ստոր «հրապարակախօսներ»

որոց կարծես միակ նպատակն է աւելի և աւելի խորասուզել հայ ժողովուրդը այս սխալի լարիւրինթոսին մէջ, որոց գործունէութիւնը կարծես կը կայանայ որչափ կարելի է երկու դրացի ժողովուրդները իրարմէ անջատելու, նոցա յարաբերութիւններն թունաւորելու, աւելի զուգուելու նոցա և աւելի թշնամացնելու մէջ: Այսօր այս ուղիով քալողները, և այն ալ ո՛չ միայն անարժան հրապարակախօսները, ո՛չ միայն յեղափոխականները, այլ և ամեն մի հայ անհատ, մեծ յանցանք կը գործէ և մե՛ծ, շատ մեծ պատասխանատուութեան տակ կիյնայ մարդկութեան և պատմութեան առջև:

Մենք գիտենք որ ժողովրդային մէն մի անհատ չէ կարող հասնիլ այն աստիճան զարգացման, որպէս զի կարող լինի ըմբռնել ժամանակակից պահանջներն իրենց բոլոր նրբութիւններով: Ժողովուրդը, ամբողջ առհասարակ չը բաւականանայ նոր զաղափարի, նոր մտքի, նոր ձգտումի միայն մի քանի կարևոր կէտերը հասկանալով: Այդ զաղափարի, մտքի, ձգտումի նրբութիւններն հասկնալու համար նորա կը պակսին անհրաժեշտ հանդիսացող բազմաթիւ պարագայներ և հասարակական պայմաններ: Աւստի նա այդ բոլորը կը թողու կրթեալ գասակարգին կարգադրելու, կրթեալ բառիս բովանդակ նշանակութեամբ: Այս այն գասակարգն է որուն կուտան ինտէլիգէնտ, վարող, զեկավարող և կամ վարչապետ անակներ:

Իայց մենք գիտենք, թէ այն հակառակակալական ոգին, որ կը տեսնուի հայ ժողովրդեան մէջ, իր սկիզբը, իր ծնունդը առած է ո՛չ այնքան ժողովրդէն, որչափ նորա գատը «վարող» աղգասէրներէն: Իրնչև իսկ ենթադրելով թէ գտնուին ոմանք, որք համաձայն չըլլան մեր այդ կարծիքին, այսինքն թէ՛ հակառակակալական ոգին ժողովուրդէն չէ ծնունդ առած, մենք, որ կոչուած ենք մի մեծ գառ պաշտպանելու, միթէ չը պիտի՞ ամեն մի ճիշդ թախիներ, ամեն մի միջոցի ձեռք զարկենք, այդ Պետաս կար և վերջին ծայր աննպատակայարմար ուղղութեան առաջն առնելու: Ո՛վ կարող է ըսել որ տաճիկ ժողովուրդը մի և նոյն հալածանաց, մի և նոյն անիրաւութեանց ենթակայ չէ, որոց ենթակայ է հայ ժողովուրդը: Զայս վկայած է և կը վկայէ ամեն մի զիւզացի հայ. իսկ քաղաքացին վկայելով նոյնը, աւելի վատթար է նկարագրած տաճիկ կացութիւնը, մատնանիչ ընելով «հայու ճարպիկութիւնը» աւելի ճիշդ՝ տոկունութիւնը. «հայը ճարպիկ է» կըսէ քաղաքացին, նա ամեն ծակէ կարող է մտնել, ուստի և չը նայելով կառավարութեան հալածանաց, ան այս կամ այն կերպիւ կարող կը լինի աւելի՛ հատուատուն եղանակաւ կարգադրել իր գործերն և աւելի՛ բարւոքել իր կացութիւնը (հարկաւ, համեմատաբար):

Եւ այս ճամարտութիւնը երևան կենէ, երբ անաչառ ու անկողմնակալ աչքով հետազոտենք երկու ժողովրդոց կենցաղավարութիւնը, ինչպէս քաղաքաց, նոյնպէս և գիւղերու մէջ: Մտէք առաջին պատահած քաղաքը և գուք կը տեսնէք որ հայերու տները աւելի՛ ընդարձակ, աւելի՛ շքեղ, աւելի պայծառ ու մաքուր են, քան տաճիկացը: Տու

նը մտէք և կը տեսնէք աւելի լաւ, աւելի մաքուր և աւելի չքեղ կապրի քան իր գրացին: Գպրոցներն նոյնպէս, եկեղեցին և այլ ազգային հիմնարկութիւնները՝ նոյնպէս Մտէք գիւղը, զուք անպատճառ կը տեսնէք որ հայ գիւղացին աւելի հող, աւելի տաւար ունի, քան իր գրացի տաճիկը (այետք չէ չիթիւ տաճիկ գիւղացին, տաճիկ կալուածատէրի հետ): Մտէք բանտը, կը տեսնէք թէ հայը բանտարկուած է, կամ «խնդրի» համար, կամ թերթի և կամ դէնքի, շատ քիչ են և հազուադիւր հայ գողեր: Մինչդեռ տաճիկ բանտարկեալները մեծաւ մասամբ գողութեան և աւազանութեան համար են բանտարկուած: Թերևս գտնուին աղքատներ, որք առարկեն մեղի, թէ հայը տաճիկէն բարոյական է, այդ պատճառաւ ալ գող չէ: Այլ կը պատասխանենք մենք, գողութեան աղբիւրը աղքատութիւնն է. տաճիկն աւելի աղքատ է, քան հայը:

Այդ առաջ էր, որ թուրք ժողովուրդը քիչ թէ շատ առանձնաշնորհեալ կերեւէր, սակայն և ի՞նչ առանձնաշնորհում. նա իրաւունք ունէր կարմիր ֆէս կրելու, իսկ հայը ո՛չ. նա իրաւունք ունէր ինչ գոյնով և ձևով հագուստ որ ուզեր հագնելու, որմէ զրկուած էր հայը. նա իրաւունք ունէր իր պատուհաններն ապակիով ծածկելու, իսկ հայը ո՛չ, և այն և այն, բոլորը սոյնանման աննշան բաներ, որոնցմով ո՛չ միտ կրնար կշտացնել և ո՛չ ալ հանգիստ ըլլալ:

Այո՛, առանձնաշնորհեալ են և այսօր տաճիկները, սակայն ո՛չ ամենը, այլ փոքրամասնութիւն մը: Առանձնորհեալ են հարուստները, կալուածատէրերն, պաշտօնեաները, իսկ ժողովուրդը, գիւղացին մերայինների նման ճնշուած են, հարստահարուած են, նեղուած են: Եւ միթէ՞ մեր հարուստները բաղդատմամբ աղքատներու հետ առանձնաշնորհեալ չեն:

Ասով ես չեմ ուզեր ըսել, որ մեր և տաճիկներու միջև թշնամութիւն տեղի չէ ունեցած: Այո՛, թշնամութիւն եղած է և այսօր ալ կայ: Սակայն թէ ինչո՞ւ է եղած, ի՞նչ հիմունք է ունեցած ազգ թշնամութիւնը և թէ ինչո՞ւ կայ այսօր իսկ, դա՛ և խնդրի տարբերութիւնը, որոյ և միայն որոյ վրայ կարելի է խօսել, խօսել երկարօրէն, առանց թշնամական ոգի կրելու, և, առաւել ևս, առանց թշնամական ոգի տարածելու երկու գրացի, քաղաքական ու անտեսական տեսակէտով միակերպ զօրութեամբ ճնշուած, հալածուած ժողովրդոց մէջ, որոց ցաւերը, գանգատները մի են և կը պահանջեն միօրինակ դարման:

Քարբերդ . Ազատասէր .  
(Կը շարունակվէ.)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԹԻՒՐԻՒՅԻԱՅԻՅ .

Մեզ գրում են հետեւեալը. —  
«Համագումար ժողովոյ եկեղեցական առանձնաշնորհմանց մասին Բ. Գրան մատուցած յայտնի խնդրագոյն պա-

տասխանը երկար ատեն ձգձգուելէ վերջ, գուցէ այդ վերազարձուած, կրճտուած ու սրբազրուած խնդրագոյն իբր պատասխան, Բ. Գրուր ներկայ տարւոյս մարտ 29 թ. հրամանագիր մը ղրկեց բոլոր կուսակալներուն և կառավարիչներուն հայոց եկեղեցական առանձնաշնորհմանց խնդրոյն մասին, ուր կըսուի թէ «հայոց պատրիարքարանի տրուած կայսերական հաւանդ հրովարտականներուն իմաստին համեմատ՝ եպիսկոպոսներուն ու առաջնորդներուն նկատմամբ երբ մի բողոք տեղի ունենայ, մինչև որ նոյն բողոքոյ ստուգութիւնը հայոց պատրիարքարանի կողմանէ չը հաստատուի, եպիսկոպոսներն ու առաջնորդները պաշտօնազուրկ չը պիտի լինեն»: Հակառակ հայոց պատրիարքոց շնորհեալ հրովարտական և եպարքոսական հրամանագրի, որոյ մեջանն իսկ գեռ չորացած չէ, արդի եպարքոսը մասնաւոր պաշտօնագրով մը Կիլիկիոյ Արտանայի կուսակալին կը յայտնէ նոյն քաղաքի առաջնորդ Մ. Կրտիչ եպիսկոպոսի պաշտօնազուրկ լինելը և առանց որ և է բողոքի, ինքնազուրկ կը զրկէ զնա իր պաշտօնէն: Արտանայի ազգ. վարչութեան քաղ. և կրօն. ժողովներն, տեղական և թեմական ժողովրդեան թախանձագին խնդրանաց համեմատ, մի պաշտօնական տեղեկագրութեամբ Կ. Պօլսոյ պատրիարքին կը դիմէ, խնդրելով՝ որ իրենց առաջնորդը կրկին իր պաշտօնին մէջ վերահաստատել տալու ջանայ, սակայն ի զուր Կ. Պօլսոյ պատրիարքն ու ազգ. վարչութիւնը, ազգ. կրօնական ժողովոյ անդամակցութենէ զրկուած եպիսկոպոսաց համար ի՞նչ կարողացաւ ընել, որ մի դաւառի առաջնորդի համար կարենայ բան մը ընել:»

Մեզ հաղորդում են, թէ «Չէյթունցի 45 բանտարկեալը, ընդ որս կար ապետ եպիսկոպոս Աւինոյ, տակալին Հալէպի նահանգին կեդրոնական բանտին մէջ կը հիծեն: Այս նահանգին մէջ թրքաց ձեռքով հայ կուսանաց ու կանանց բաղմաթիւ առեւանգութիւնք տեղի կունենան: Թուրք կառավարութիւնը՝ առեւանգուածները իրենց կամօք թրքացած են ըսելով, առեւանգուները զատապարտութենէ ազատ կը թողու և այդ կերպով առաւել ևս թուրք հասարակութեան մէջ պղծագործութեան ու մոլեռանդութեան ախտերը կը տարածէ: Գաղթական չէրքէսներն ալ տեղ-տեղ աւարտութիւններ ու մարդասպանութիւններ ընելէ չեն դադարիր:»

«Հնչակի» նախնիքաց համարում մենք հաղորդեցինք Արտանայում բանտարկված հաճընցիների արձակման լուրը. այժմ՝ գրա մասին մեզ գրում են հետեւեալը. —  
«Արտանայի մէջ Հաճընցի տասն և հինգ բանտարկեալք արձակուեցան, սակայն ո՛չ տաճիկաց կայսեր բարի կամօք, այլ այժմ ստուգուած է, թէ վերահաս և անապահով քաղաքականութեան մը և մէկ օտար տէրութեան ազդեցութեան մը արդիւնքն է այդ ինչպէս կերելի, մեր ազգային վարչութեանց գլուխ՝ Կ. Պօլսոյ ազգ. պատրիարքարանը լուր անգամ չունեցաւ այդ արձակման մասին, եթէ ոչ թմրուկներ կը զարնէր «առատագութ կայ-

սեր գորովազթութիւնն՝ ցոյց տալու համար:

Թէ՛ Ատանայի և թէ՛ Հալէպի նահանգաց մէջ քար-քերզցի հայերն երբ կը ճամբորդեն, Ամերիկայ երթալու արաստանութեամբ կը բռնուին, կառավարութեան պաշտօնեայնեան կը կողպատուին, կը բանտարկուին և յետ կուղարկուին Իֆարրերդ: Դժբաղդ քարբերդցիք թէ՛ հազարաւոր օսկիներէ կը զրկուին և թէ՛ անտանելի թշուառութիւն կը կրեն:

Նոյեմբեր 5 ից մեզ գրուած են հետեւեալ կարեւոր տեղեկութիւնները . —

Ղերջին ժամանակներս սկսած է հրոսակաց խումբ մը երեւան գալ Սերաստիոյ նահանգին մէջ, որ ժողովրդեան մէջ իրարանցում կը պատճառէ և մանաւանդ երկիւղ կը ներշնչէ թուրք կառավարական մարմնոց, որոց դէմ կը գործէ: Յայանենք մի քանի դէպք այդ խմբի մասին:

Ամասիայի Ղաւղայ գիւղաքաղաքէն մէկ ժամ հեռաւորութեամբ Չալթաք ըստած ձորին մէջ պահուած հրոսակաց խումբը կը յարձակի յիշեալ ձորէն անցնող կարաւանի մը վրայ՝ կալանաւոր մը փախցնելու նպատակաւ, զինուորականի մը ձին կսպաննէ և զինքը կը վիրաւորէ: Կարաւանը անձնաւոր կը լինի, յանձնելով երեք ընկույզներ, մէկ հրացան և այլն գոյքեր . . . .

Սամսոնէն հայ կալանաւոր մը, զոր Կ. Պօլիս կը տանէին, կերպով մը կը յաջողի իր վրայ հսկող զինուորակա նաց ձեռքէն փախչիլը: Ամեն կողմ հեռագիր կը արուի, թէ փախստականը բռնեն ուր որ գտնեն, սակայն բոլոր ջանք ու աշխատութիւն ապարդիւն կը մնան:

Հոկտեմբեր 6 էն սկսեալ Ամասիայի և Մարզուանի մէջ սարսափելի խուզարկութիւններ ընել սկսան, պատըր ուակելով թէ «ձեր տան մէջ ասպատակներ կը պահէք»: Մարզուանի մէջ տասէն աւելի տուներ խուզարկեցին, բայց երբ ոչինչ չը կարողացան գտնել, 30 ի չափ կիր-ճիի ձեռով հագնուած երիտասարդ հայ արհեստաւորներ ձերբակալեցին, կարծելով թէ կամ ասպատակներ են և կամ անոնցմէ լուր ունին: Միամիտ արհեստաւորներն ու գիւղացիներն՝ որք բնաւ տեղեկութիւն չունին այդ ասպատակներէն, անիրաւ տեղը հալածանաց ու շարչարանաց ենթարկուելով առաւել ևս կը զրգուրին ու կը հիասթափին:

Ամասիայէն և Ղաւղայէն ոստիկաններ կը զրկուին Մարզուան ասպատակաց խումբը հալածելու և բռնելու համար. սակայն ոստիկանք չը համարձակելով խմբին վրայ երթալ, կը մնան զիւրերը և նեղելով գիւղացիները, իրենց զուարճութեանց կը նային: Ասպատակ խումբը իմանալով այս, թուրք ճամբորդներուն կը պատուիրէ, որ «գնացէք, ոստիկանաց իմացուցէք որ մենք այս ինչ տեղն ենք, թող գան ու բռնեն զմեզ»: Բայց երբ ճամբորդներ ընն իմաց կուտան ոստիկանաց, ասոնք տեղեկութիւն բերող ճամբորդներն բռնելով կը ծեծեն, կը բանտարկեն, ըսելով թէ «ինչո՞ւ ասպատակաց խմբին տեղը մեզ կիմացունէք. չէ՞ որ եթէ բռնելու երնենք մեզի ալ պիտի

սպաննեն»: Չը գիտնալ կը ձեռնան ասպատակաց խմբին գտնուած վայրը, որպէս զի մէկ կողմանէ ժամանակ անցունելով իրենց աշխատանքի համար ամսաթոշակ կորզեն և միւս կողմանէ սպտասխանատու չըմնալու համար, կառավարութիւնը խաբեն, ըսելով թէ շատ աշխատեցանք, սակայն չը կարողացանք գտնել:

Հոկտեմբեր 20 ին, կիրակի օրը նոյն Չալթաք ըստած տեղը երեսուն չէրքէսներ, ուղեւով ասպատակաց հայածել կուտի կը բռնուին նորա հետ: Խումբը կստիպուի մէկ չէրքէս սպաննել և երկուք ալ վիրաւորելով՝ անցնել ու երթալ Գափու. գայա ըստած տեղը: Քանի մը կիրճիներ մտադրութիւն ունենալով Գափու գայա կողուած զիւրի վրայ յալ ձակելու՝ և ասպատակաց խումբն իմանալով այդ, անդ պատրաստ կսպասէր նոցա գալտեան: Երբ կիրճիներն երեւան կուգան, խումբը յանկարծ նոցա չորս կողմը պաշարելով՝ կուի կսկսի, որ կը տեւէ 5 ժամ: Կիրճիներն երկու մեռեալ և 5 վիրաւոր թողլով կը փախչին, իսկ խումբը կանցնի և թաւ յիր աղայի տան վրայ յարձակելով 700 օսմն. օսկիի չափ դրամ և գոյքեր կառնէ և վերադարձած ժամանակ կը տեսնէ որ Չալթաքի մէջ կրկին չէրքէսներ հաւաքուած՝ կուգեն ձերբակալել զինքը: Այդտեղ դարձեալ մի չէրքէս սպաննելով կը շարունակէ իր ճամբան:

Այս բոլորը մանրամասն կը հետազոտեն թէ Սամսոնի և թէ այլ տեղի կառավարութեանց, ըսելով թէ «Մինաս Կանի խումբը տեղոյս խաղաղութիւնը կը խոտլէ . . .»: Կառավարութիւնը ամեն կողմ ոստիկաններ կը ցրուէ և երբ չը յաջողիր յիշեալ խումբը ձերբակալել, ոստիկանաց ասպատակաց ձեռով հագուած հագցունել կուտայ՝ որով կարենայ զանոնք խաբել: Ոստիկաններն չեն համարձակիր ասպատակաց խմբին վրայ գնալու, ըսելով թէ «կէ պէրմէյէ վազթըմը եօք» (սատկելու ժամանակ չունենք): Կառավարութիւնը շուարած՝ նորանոր մարդիկներ կը հրաւիրէ ոստիկան գրուելու. սակայն նոցա կը պատասխանեն թէ «ձեր տուած ամսաթոշակն մեզ հարկաւոր չէ. մենք մեր կեանքը չնշին գուժարի մը համար վտանգի տակ չենք գներ . . .»:

Տեղական կառավարութիւնը, ասպատակաց խմբի փոխարէն՝ ձերբակալելով բոլորովին անմեղ մարդիկ, զոր ծունէութիւն ցոյց տալու համար՝ որպէս զինուէրներ և շքանշաններ ստանայ, կըհեռգրէ Կ. Պօլիս թէ, Մինաս Կանի խմբի մարդիկը ձերբակալելով ամեն բան կարգադրեր է: Այս լուրը, զոր հրատարակած է Կ. Պօլ սոյ «Ծագիկ» թերթը հոկտեմբեր 19 թ., բացարձակ սուտ և սխալ է: Այսպիսի սխալ լուրերի տարածայնութիւնը, ուրիշ նպատակ չունին, եթէ ոչ կառավարութեան տհարութիւնը ծածկելու և իբրև թէ այլ նման խմբերու վճատութիւն պատճառելու:

Հոկտեմբեր 29 ից մեզ հաղորդում են հետեւեալը . —

Սերաստիոյ կուսակալին կողմանէ լրտես գրկուած Յարութիւն անուն 25 տարեկան անձը, որ Եւզոփիա, Ամասիայ, Մարզուան և Սամսոն գնացած ու ինչ. ինչ

կարևոր տեղեկութիւններ լրտեսած էր, և որոյ լրտեսութիւնը ստուգուած էր, տասն օր յառաջ սպաննուած է:

Մասնախոյի մէջ գօրադատի Տէլի. Խուրչիտ անուն անձը, զօրանոցի շինութեան համար պահատեալ տախտակները ձրիապէս ձեռք ձգելու նպատակաւ տախտակաւ հալածու հայու մը կերթայ և սպառիկ 50 տախտակ կը պահանջէ: Հայը կռահելով Տէլի - Խուրչուտի խոր մանկութիւնը, կրսէ «մեր սովորութիւնը կանխիկ վճարելի է»: Վաճառականին մերժողական խօսքին վրայ թուրքը բարկացած՝ կուզէ բռնութեամբ տախտակներն առնել, սակայն հայը իր յանդուգն պատասխաններովը կընդգրկմանայ և կը մերժէ տար Նոյն օրը գիշեր ծա մանակ յիշեալ զինուորական պաշտօնեան քանի մը զինւորներու ընկերակցութեամբ կը վերադառնայ հայուն խանութը և այս անգամ ոչ թէ տախտակները գնելու, այլ տիրոջը բացակայութեան դանձր հրկեղելու դիտաւորութեամբ: Զինուորաց կը հրամայէ, որ հետեւին բերած քարիւղին տախտակներուն վրայ լեցունեն ու կրակ տան: Հրամանը կը կատարուի և տախտակներն կը բռնկին: Տախտակաւաճառին խանութը ամբողջովին այրելէն վերջ կը բակը կսկսի տարածուիլ նորա կից գտնուած ցորենավաճառ հայոց խանութները՝ որք նոյնպէս մտխիւր պիտի գտնային, եթէ դրացիներն ու շուկայի պահապաններն իմանալով վրայ չը հասնէին կրակը մարելու: Հայ երկ տասարդ մը իրողութիւնը իմանալով՝ կուզէ բէլուրիկ հարուածներով պատժել Տէլի - Խուրչիտը, սակայն գնտակ կը վրիպի և երկայնահասակ շարագործը երկիւղէն փախ շելով կազատի:

Հոկտեմբեր ամսոյ մէջ աղքատ քրիստոնէից վրայ զիջեալ տուրքերն ժողովելու նպատակաւ՝ թուրքերէն գօ միսիօն (մասնաժողով) մը կազմուեցաւ, որ ամենախիստ միջոցներն ի գործ գնելով կը ջանայ կարելիին չար քիչ ժամանակէն ժողովելը Ս.Յ. դօմիսիօնի կարգադրուած միջոցն է՝ տասնեակներով արհեստաւորներ բանտարկել տալ և պահանջուած տուրքերը չի կրցող վճարողները օրերով բանտին մէջ թողուլ անօթի, ծարաւ: Սրահան աչ խատանքով ապրող արհեստաւորաց ընտանեաց վիճակը անտանելի կը դառնայ, տանց մէջ սովալլուկ կը մնան: Բանտարկեալներն տեղոյն աղգ. վարչութեան ազդեցութիւնը մատուցանելով կը խնդրեն իրենց թշուառ վիճակին մասին միջոցներ ձեռք առնել, սակայն ցարդ անոյս և անօգնական բանտին մէջ կը հեծին: Աշտուակեր և անգութ կառավարութիւնը որ և է ազիրս մտիկ ընել չուզելու, այլ դրամ, դրամ կը պրտայ:

Մարդուանէն նոյեմբեր 3 ից գրում են. «Պալայեան մահդեսի Աստուածատու ծառայողը հինգ օր յառաջ Հաճի Գուզ ըսուած տեղէն գալով՝ գիշերը ծառայ մէկ ու կէսին ատենները իր տուն մտած ծառայ տեղոյն ոստիկան ապետ Աոկման աղայի որդին Հասան Օն պաշին և ասոր ընկերներէն Թէքէ թաղեցի Սալեհ և Հաֆըզ անունով ոստիկանք յիշեալ Աստուածատու

րին վրայ յարձակելով 53 օսմն. սակին կը կողոպտեն և սուրերով ու ատրճանակով գլուխը և այլ տեղեր վիրաւորելով կըռնն, թէ կառավարութեան տունէն քեղի կուզեն: Վիրաւորեալը կը հետևի նոցա, սակայն անենելով՝ թէ զինքը ոչ թէ կառավարութեան գուռը, այլ ուրիշ կողմ կը տանին և կուզեն քաղաքէն դուրս հանել սպաննելու նպատակաւ, կսկսի բարձրաձայն աղաղակիլ՝ «Եղնութիւն»: Աղաղակին վրայ մօտակայ քանի մը հայ և թուրք տներէն դուրս գալով օգնութեան կը հասնին: Ոստիկանք կուզեն փախչիլ, սակայն խանուած բաղձութիւնը զանոնք կը ձերբակալէ և այս իրողութիւնը կառավարութեան իմաց կը տրուի: Աստուածատուր խեղոյն բողոքեց քաղաքապետին (գայմազամին), որ յիշեալ Հասան օեպաշին ձերբակալելով՝ զրկեց Աճատիա, ուր երկու օր բանա մնալէն վերջ մուսթանիքդի քննութեամբ ազատ թողուեցաւ:

Յ. Պոլսից հաղորդում են հետեւեալը. —  
Ղալաթիւյ աշտարակին մօտերը երեք փօլլա և քանի մը ծպտեալ ոստիկաններ կուզեն հայ երիտասարդի մը վրան խուզարկել զիտնալով՝ որ «Հնչակ» կը կրէ: Փօլլաներէն մին կը մօտենայ երիտասարդին և թեէն բռնելով՝ կրսէ «Գու վտանգաւոր մէկը կերեխ, վրայ պիտի խուզարկեմ»: Երիտասարդը կը պատասխանէ, թէ «այդ անկարելի է որ փողոցին մէջ վրաս խուզարկես: Երթանք ձեր պահականոցը՝ հոն կարող էք ուզանուդ չափ վրաս նայել»: Ոստիկանը տոյն ընդգրկմանի պատասխանին վրայ բարկացած՝ երիտասարդին կապտակէ. սա հըրելով ոստիկանը, ձեռքէն կը սրժի ու կսկսի փախչիլ: Ոստիկանը անանելով որ որսը ձեռքէն խոյս կուտայ, ատրճանակ կարձակէ ետեւէն, կը սույլէ միւս ընկերաց և ինքը երիտասարդին ետեւէն կը վազէ: Երիտասարդը քովի փողոցին մէջ զէպի ներս քաշուած դռան անկիւնը կը պահուի և ոստիկանը վազելով իր քովէն անցած պահուն՝ գառոյնի հարուածով մը գետին կը վրռէ, և այսպիսով կը յաջողի աղատիւր Արսուի թէ՛ վիրաւորեալ ոստիկանը մեռած է:

Ս.թէքից գրում են մեզ հետեւեալը. —  
«Անցեալ կիրակի Նոյ. 16 ին, տեղոյս կրիտացիներէն քառասոր հանդէսով տօնեցին 66 թուականի իրենց ապստամբութեան 25 - ամեակը և կատարեցին այդ ապստամբութեան մէջ մեռնողներուն հոգեհանգիստը: Հնչակեան Յ. Աուսակցութեան ներկայացուցիչը տասն ձին հրաւիրագրով հրաւիրուած լինելով 40 էն աւելի հայերու հետ միասին ներկայ գտնուեցաւ հանդէսին, որուն ներկայ էր խուան բաղձութիւն և հիլլեն ժողովրդեան ընտրելագոյն գասը Բաղձութիւն ճառեր կարգացուեցան:»

Յօդուածներ, թղթակցութիւններ և տեղեկութիւններ ուղարկել հետեւեալ հասցէով.  
Paris. (France). — M. Beniard . Poste restante .  
Իսկ դրամական մանդատները ( mandat ) ուղարկել այս հասցէով. —  
Eaux - Vives . ( Suisse ) . — M. Daniel . Poste restante .

Եւստի. Հայկական ազատ տարան .